



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԻ
ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ



«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2013



**ՀԱՍԱՆՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**



Հայաստանն այսօր ժողովրդավարական և սոցիալ-տնտեսական զարգացման նշանակալի գործընթացների շեմին է: 2012 թ. խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները որոշակի ազդեցություն ունեցան հասարակության ժողովրդավարացման գործընթացների վրա և արդիական դարձրեցին կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը: 2013 թ. նախագահական ընտրությունները կարևորվում են թե՛ կանանց պատասխանատվության, թե՛ երկրի համար կարևոր քաղաքական գործընթացների վրա նրանց ազդեցության ուժեղացման տեսանկյունից:

Ընտրություններին քաղաքացիների, այդ թվում ընտրողների կեսից ավելին կազմող կանանց մասնակցությունից է կախված հասարակության հետագա զարգացումը: Հայաստանի կանանց ակնկալիքները կապված են խաղաղության, կայունության և սոցիալական բարեկեցության ապահովման հետ: Դա պայմանավորված է նրանով, որ կանայք, մի կողմից, ավելի հակված են երկխոսության ու փոխզիջման և ունակ են խաղաղություն ու կայունություն ապահովելու հասարակությունում: Մյուս կողմից՝ առօրյա կյանքի խնդիրները, սոցիալական հարցերն ավելի մոտ են կանանց:

Փետրվարի 18-ին կայանալիք նախագահական ընտրությունների գործընթացների տեսանկյունից «Կանանց քաղաքական օրակարգի» ձևավորման խնդիրը դարձել է առանձնապես արդիական ու նշանակալի:

Մենք՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի լիդերներն ու ակտիվիստները, գիտակցելով մեր պատասխանատվությունը երկրում կատարվող գործընթացների համար և կյանքը դեպի լավը փոխելու կամք և ուժ տեսնելով մեր մեջ, հասարակությանը հուզող հիմնախնդիրները լուծելու նպատակով ՀՀ նախագահի ընտրությունների շեմին ձևավորել ենք «Կանանց քաղաքական օրակարգը»՝ ներառելով ազգային անվտանգության, սոցիալական արդարության, երկրի բարօրության հարցերը:

Մենք դիմում ենք ՀՀ նախագահի թեկնածուներին խնդրանքով ծանոթանալ «ՀՀ նախագահի 2013 թ. ընտրություններում «Կանանց քաղաքական օրակարգին» և ներկայացնել բարձրացված խնդիրների լուծման իրենց մոտեցումները:

Մենք հանդգլած ենք, որ «Կանանց քաղաքական օրակարգը» հնարավորություն կտա լսելի դարձնելու կանանց ձայնը, և շատ հարցեր լուծում կատանան:



«Կանանց քաղաքական օրակարգը» Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թվականի ընտրություններում

ՀՀ նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների նախօրեին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան անցկացրել է «Կանանց քաղաքական օրակարգը» ՀՀ նախագահի 2013 թ. ընտրություններում» հանրապետական ակցիան:

Ակցիայի շրջանակներում Ասոցիացիայի Երևանի և բոլոր մարզերի 25 մասնաճյուղերում տեղի ունեցան քննարկումներ՝ նպատակաուղղված այն հիմնահարցերի վերհանմանը, որոնց լուծումը հույժ կարևոր է երկրի զարգացման և առաջընթացի ապահովման համար:

Ամփոփելով առաջադրված հիմնախնդիրները և բարձրացված հարցերը՝ Չեզ ենք ներկայացնում դրանցից առավել կարևորները՝ ակնկալելով կանանց հանրությանը հուզող հարցերի Չեր պատասխանները, որոնք հնարավորություն կտան կողմնորոշվելու փետրվարի 18-ին կայանալիք ՀՀ նախագահի ընտրությունների ժամանակ:

1. Հայտնի է, որ հանրապետությունում շարունակում է աճել աղքատության ցուցանիշը՝ 2008-ին արձանագրված 27.9%-ից հասնելով 35.8%-ի: 2010 թ. բնակչության ավելի քան մեկ երրորդը՝ 35.8%-ը, եղել է աղքատ, նրանցից մոտ ամեն հինգերորդը (21.3%) շատ աղքատ է, իսկ 3.0%-ը՝ ծայրահեղ աղքատ, ընդ որում, աղքատ բնակչության 54.5%-ը կանայք են:

Նախագահ ընտրվելու դեպքում ո՞րն է լինելու Չեր քաղաքականությունը աղքատությունը նվազեցնելու ուղղությամբ:

2. Գենդերային իրավիճակը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում բնութագրվում է կնոջ՝ մարդու իրավունքների խախտումներով, քաքնված հորիզոնական և ուղղահայաց խտրազատման դրսևորումներով:

Կանայք գործնականում հնարավորություն չունեն օգտվելու աշխատանքի սահմանադրական իրավունքից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների մեջ կանայք կազմում են մոտ 70%: Առավել ակտիվ աշխատունակ տարիքային խմբում՝ 30-39 տարեկան կանանց շրջանում, գրանցված գործազուրկության մակարդակը կազմում է 60.1%:

Կանանց տնտեսական ակտիվությունը բոլոր տարիքային խմբերում,



տղամարդկանց համեմատ, մնում է զգալիորեն ցածր մակարդակում. տնտեսապես ակտիվ են կանանց 48,8%-ը և տղամարդկանց 75,9%-ը: Հանրապետությունում կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի մոտ 60%-ը:

Վերջին տասնամյակում տեղի է ունենում աշխատանքի բարձր վարձատրությամբ ոլորտներում կանանց իրավունքների ուղղակի օգնության փառսկան գործընթաց: Զբաղվածության բարձր վարկանիշով և վարձատրությամբ ոլորտներում՝ վարկավորման, ապահովագրության, բանկային և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության համակարգում, կանանց ներկայացվածությունը վերջին տարիներին անընդհատ նվազում է:

Դեռևս ցածր է ձեռնարկատիրությանը զբաղվող կանանց տոկոսը: Թեև ըստ պաշտոնական տվյալների՝ ձեռնարկատերերի ընդհանուր թվում կանայք կազմում են 25%, նրանց իրական թիվը զգալիորեն ավելի ցածր է:

Աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում ստեղծված իրավիճակը հանգեցրել է ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրների՝ շարունակվող արտագաղթի, ուղեղների արտահոսքի և տղամարդկանց աշխատանքային միգրացիայի հետևանքով առաջած ոչ լրիվ կամ հեռահար ընտանիքների, որոնք վտանգավոր մարտահրավերներ են ազգային անվտանգության առումով:

Հանրապետությունում կին գլխավորով տնային տնտեսությունները, որոնց մասնաբաժինը կազմում է 30.7%, ավելի աղքատ են, քան տղամարդ գլխավորով տնային տնտեսությունները: Ամսական աշխատավարձի միջին չափը՝ մեկ շնչի հաշվով, տղամարդ գլխավորով ընտանիքներում գրեթե 2,5 անգամ ավելի է, քան կին գլխավորով ընտանիքներում:

Մեր երկրի առաջիկա տարիների զարգացման առաջնահերթությունների շարքում նշված է արդյունաբերության զարգացումը: Ընտրվելու դեպքում ի՞նչ քայլեր կձեռնարկեք թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար աշխատելու հնարավորություն ստեղծելու ուղղությամբ:

Խնդրում ենք ներկայացնել Ձեր ծրագրերը՝ ուղղված արդյունաբերական այնպիսի ճյուղերի վերականգնմանը և զարգացմանը, ինչպիսիք են թեթև արդյունաբերությունը (մասնավորապես՝ տեքստիլ և սննդի արդյունաբերությունը), ճշգրիտ սարքաշինությունը և ռադիոէլեկտրոնիկան, ինչը կնվազեցնեք կանանց շրջանում գործազրկությունը, հատկապես՝ մարզային քաղաքներում, որտեղ աղքատությունը մոտ 44% է:

Ի՞նչ մտեցում ունեք ազգային արհեստների զարգացման միջոցով գյուղական վայրերում սեզոնային գործազրկության կրճատման և քաղաքներում կանանց տնայնագործության մեջ ընդգրկելու խնդրի առնչությամբ:



3. Հայտնի է, որ բնակչության նվազումը հիմնականում պայմանավորված է երկու գործոնով՝ հարածուն արտագաղթով և ծնելիության անկմամբ, որի պատճառները սոցիալ-տնտեսական պայմաններն են, երեխաների համար արժանավայել կյանք ապահովելու անկարողության վախը, պետության խրախուսող քաղաքականության անարդյունավետությունը: Անհանգստացնող է, որ տղամարդկանց աշխատանքային միգրացիայի հետևանքով աղետալի չափերի է հասել հեռահար ընտանիքների թիվը, որը փաստորեն հանգեցրել է ընտանիքների քայքայման և ծնելիության անկման:

Երեք և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների խմբում աղքատության ռիսկի ենթակա է 60%-ը, իսկ բնակչության ընդհանուր թվում՝ 35.8%-ը:

Ընտրվելու դեպքում ո՞րն է լինելու Ձեր քաղաքականությունը ծնելիության խթանման և հայ ընտանիքի արժեքների վերականգնման հարցում:

Պատրա՞ստ եք արդյոք խնդիր դնելու ՀՀ կառավարության առջև՝ սահմանել միանվագ պետական նպաստ 300000 դրամի չափով առաջին և երկրորդ ծնված երեխաների համար, իսկ երրորդ երեխայից սկսած՝ միանվագ նպաստը հասցնել մինչև 1000000 դրամի՝ անկախ այն հանգամանքից՝ ընտանիքը հաշվառված է «Ընտանեկան նպաստ» համակարգում, թե ոչ:

Պատրա՞ստ եք արդյոք նախաձեռնել սահմանամերձ բնակավայրերում ծնված երեխաների համար տրվող նպաստի ինդեքսավորման ծրագիր:

4. Հանրության շրջանում լուրջ անհանգստություն են առաջացրել կրթության համակարգում վերջին տարիներին իրականացվող վերափոխումները:

Արդի պահանջները բավարարող ուսումնական ծրագրերի և ձեռնարկների բացակայությունը, դասավանդման ցածր մակարդակը հանգեցրել են բարձրագույն դպրոցում ուսումը շարունակելու համար կրկնուսույցների լայն համակարգի ձևավորմանը:

Հանրակրթության համակարգի ներկայիս վերակառուցումը կհանգեցնի նրան, որ հանրապետության մարզերում երեխաների զգալի մասը, այդ թվում և տաղանդավոր, գյուղերի մի մասում ավագ դպրոցի բացակայության պատճառով կզրկվի լիակատար միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունից:

Չե՞ք կարծում, որ ավագ դպրոցների անցման և միջնակարգ դպրոցների կրճատման հետևանքով խախտվում է քաղաքացու՝ լրիվ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը, բացի այդ, նման ձևով վերակառուցումը, որը հիմնված չէ գիտական հետազոտությունների և ակնկալվող արդյունքների հաշվարկների վրա, կամայականություն է և հանգեցնում է երկրի մտավոր ներուժի նվազման, երկրի տաղանդների մի մասի կորստյան և, վերջին հաշվով, խոչընդոտ կդառնա



Հայաստանի առաջընթաց զարգացման ճանապարհին:

Լուրջ ուշադրություն չի դարձվում հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգում աշակերտների և ուսանողների մեջ քաղաքացիության բարձր որակների և երկրի առջև պատասխանատվության ձևավորմանը:

Անհանգստացնող հանգամանք է նաև, որ տղամարդկանց աշխատանքային միգրացիայի և հարաճում հեռահար ընտանիքների առկայության պայմաններում, ինչպես նաև կրթության ոլորտի իգականացման պարագայում լուրջ հիմնախնդիրներ են առաջացել արական սեռի երեխաների սոցիալականացման, դաստիարակության և կրթության առումով, քանի որ նրանք զրկվել են թե՛ տանը, թե՛ ուսումնական հաստատություններում տղամարդկանց օրինակով լիարժեք սոցիալական փորձ ու հմտություններ ձեռք բերելու հնարավորությունից: Այդ իրավիճակը կարող է լուրջ մարտահրավեր դառնալ ազգային անվտանգության տեսանկյունից, քանի որ արական սեռի մատաղ սերնդի լիարժեք դաստիարակությունն ու կրթությունն է մեր վաղվա սահմանների պաշտպանության երաշխիքը:

Համաձայն եք, որ կրթության համակարգը լուրջ, քայց միանգամայն այլ սկզբունքներով վերակառուցման կարիք ունի: Նախագահ ընտրվելու դեպքում ի՞նչ քայլեր կձեռնարկեք, որպեսզի կանխվի հանրակրթության՝ ազգային շահերին չհամապատասխանող վերակառուցումը:

Պատրաստ եք արմատական միջոցառումներ ձեռնարկել կրթության ոլորտում ուսուցչական կազմի գեներային հավասարակշռությունն ապահովելու և արական սեռի դաստիարակության հատուկ ծրագրերի մշակման ուղղությամբ:

5. Նախադպրոցական հիմնարկների ցանցը, 1990-ական թվականների սկզբի համեմատ, կրճատվել է գրեթե 4 անգամ, որի հետևանքով դրանք բավարարում են պահանջարկի միայն 20%-ը: Հայտնի է, որ նախադպրոցական կրթության համակարգը ոչ միայն երեխաների սոցիալականացման կարևորագույն փուլ է, այլև հնարավորություն է ընձեռում քաղաքի երիտասարդ կանանց լիարժեք ներգրավվելու զբաղվածության ոլորտում, իսկ գյուղի կանանց՝ լիարժեք վարելու տնային տնտեսությունը և զբաղվելու գյուղատնտեսությամբ:

Նախադպրոցական հիմնարկների բացակայությունը գյուղական բնակավայրերում հանգեցնում է նաև հանրակրթական դպրոցներից երեխաների մաղումների, քանի որ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված կանայք ստիպված են լինում ավագ երեխաներին հանձնել կրտսեր երեխաների խնամքը և հետևաբար կտրել նրանց դպրոց հաճախելուց ու լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունից:



Պատրաստ եք արդյոք միջոցներ ձեռնարկել, որպեսզի նախադպրոցական հիմնարկների՝ ապօրինի օտարված և այլ նպատակներով օգտագործվող կառույցները վերադարձվեն նախադպրոցական հիմնարկներին:

6. Մեռերի իրավահավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ՝ պարտավորություն ստանձնելով ապահովել երկրում գենդերային հավասարություն: «Եվրոպական հարևանության քաղաքականություն. Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն» գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկում գերակա խնդիրների և առաջնահերթ միջոցառումների թվում նախատեսվել էր շարունակել գենդերային հավասարության մասին իրավական ակտերի լրամշակման և օրենսդրության կատարելագործման գործընթացը:

ՀՀ կառավարությունը 2010 թ. ընդունել է Գենդերային քաղաքականության պետական հայեցակարգը, հաստատել գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետությունը որոշակի պարտավորություններ է ստանձնել նաև Հազարամյակի զարգացման նպատակների ազգային շրջանակի ցուցանիշների ապահովման ուղղությամբ՝ նախատեսելով մինչև 2015 թվականը բարձրացնել երկրի քաղաքական կյանքին կանանց մասնակցության աստիճանը, ընդ որում՝ կանանց տեսակարար կշիռը Ազգային ժողովի պատգամավորների, նախարարների, մարզպետների և փոխնախարարների ընդհանուր թվում հասցնել ավելի քան 25%-ի, համայնքների ղեկավարների ընդհանուր թվում՝ ավելի քան 10%-ի:

Այդուհանդերձ, գենդերային հավասարության ապահովմանն ուղղված քաղաքականությունը դանդաղ է իրագործվում:

Կանանց մտավոր ներուժը և կազմակերպչական հնարավորությունները լիարժեք չեն ներառվում հայ հասարակության ժողովրդավարացման և զարգացման գործընթացներում:

Շարունակում է անհավասարակշռված մնալ կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը գործադիր իշխանության համակարգի քաղաքական և հայեցողական պաշտոններում: 2012 թ. տվյալներով՝ 18 նախարարներից ընդամենը 2-ն են կին, 66 փոխնախարարներից՝ ընդամենը 6-ը: Զաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանայք կազմում են ընդամենը 11%:

Հանրապետությունում ոչ մի կին մարզպետ չկա, 21 փոխմարզպետներից մեկն է կին:

Տղամարդկանց և կանանց անհավասարակշռված ներկայացվածությունը



քաղաքական որոշումների կայացման մակարդակում խոչընդոտում է հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատումը և երկրի հետագա ժողովրդավարական զարգացումը:

Ընտրական օրենսգրքում 2012 թ. ամրագրված առանց այն էլ ցածր՝ 20% գենդերային քվոտան չծառայեց իր նպատակին, կանանց տեսակարար կշիռն Ազգային ժողովում կազմեց ընդամենը 10,7%:

Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովներից 4-ում կանայք ներկայացված չեն:

Նախագահ ընտրվելու դեպքում ի՞նչ քաղաքականություն եք վարելու՝ ուղղված քաղաքական և հայեցողական պաշտոններում կանանց ներկայացվածության ավելացմանը:

Պատրաստ եք արդյոք նախաձեռնելու օրենսդրական փոփոխություններ, որոնք վերաբերեն գենդերային հավասարության ապահովման իրական մեխանիզմներին:

7. Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական ինքնակառավարման որակը չի համապատասխանում ժամանակի պահանջներին, քաղաքական կուսակցություններն ակտիվ մասնակցություն չեն ունենում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում և հետևողական աշխատանք չեն տանում առաջադրման համար թեկնածուներ պատրաստելու ուղղությամբ: Հետևանքն այն է, որ գենդերային անհավասարակշռությունը պահպանվում է քաղաքապետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար պաշտոններում: 48 քաղաքապետների թվում կին չկա, 51 փոխքաղաքապետներից մեկն է կին: Չափազանց ցածր է կանանց ներկայացվածությունը գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններում: 2012 թ. ընտրություններում 915 գյուղական համայնքներից ընդամենը 10 համայնքում է կին ղեկավար ընտրվել: Կին համայնքի ղեկավարների թիվը, նախորդ ընտրությունների համեմատ, 2012 թ. նվազեց երկու անգամ և կազմեց ընդամենը 1,6%:

Գյուղական ավագանիների կազմում ընդամենը 8,4%-ն է կին:

Նախագահ ընտրվելու դեպքում ի՞նչ քաղաքականություն եք վարելու՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմիններում ժողովրդավարության զարգացմանը, ինչպես նաև կանանց ներկայացվածության ավելացմանը:

«ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

մշակվել է

«Կանանց քաղաքական մասնակցությունը և
քաղաքացիական նախաձեռնությունները.
գենդերային հավասարության
հասնելու հեռանկարները Հայաստանում»
ծրագրի շրջանակներում:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, ք.Երևան, Սարյան, 22, 12-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 53 68 02
Ֆաքս՝ (374 10) 53 67 92
Էլ.փոստ՝ awue.armenia@gmail.com



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչության տպարանում:
ք.Երևան, Սայաթ-Նովա, 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան, 45 (տպարան)
Հեռ.՝ (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ.փոստ՝ info@asoghik.am